ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

5 Փետրվարի 2020թ. թիվ 5-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի

Ո ր ո շ ու մ եմ.

Լոռու մարզի Արևաշող համայնքի տարածքում 2020 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

1. Հաստատել Լոռու մարզի Արևաշող համայնքի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Լոռու մարզային փրկարարական վարչությանը տրամադրել.

   ա. տեղեկություն համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

   բ. ներկայացնել առաջարկություններ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

2020թ. Փետրվարի 5
գ.Արևաշող

Հավելված 1
Արևաշող համայնքի ղեկավարի
2020թ. Փետրվարի 5 – ի
թիվ 5-Ա որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

ՀՀ ը/կ	Համայնքի անվանումը	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Գումարի չափը (հազ. դրամ)	Պատասխանատու, կատարող	Նշումներ
1	2	3	4	5	6	7	8
1		1 Կանխարգելիչ միջոցառումներ					
2	Արևաշող	ՈՒսումնասիրել և գնահատել առուների հուների վիճակը և արդյունքները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:	Մինչև 2 թ.	բյուջեով ծախսեր նախատեսված չեն	0	Համայնքի ղեկավար	
3		Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ առուների հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար:	Մինչև 2 թ.	բյուջեով ծախսեր նախատեսված չեն	0		
4		Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքա-վտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար:	Մշտական	բյուջեով ծախսեր նախատեսված չեն	0		
5		Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը գետակների ջրի, օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:	Ամեն օր, սկսած 2 թ.	բյուջեով ծախսեր նախատեսված չեն	0	1-ի կարգի մասնագետ	
6		Նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև վառելիքաքսայուղային նյութերի պաշար՝ հարկ եղած դեպքում աղետի շրջանից բնակչության տարահանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար:	Մինչև 3 թ.	բյուջեով ծախսեր նախատեսված չեն	0	Համայնքի հաշվապահ	
7		Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տուժածներին առաջին բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու, անհրաժեշտության դեպքում ստացիոնար բուժում կատարելու համար:	Մինչև 3 թ.	բյուջեով ծախսեր նախատեսված չեն	0	Համայնքի բուժաշխատող	
8		Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով:	Մինչև 3 թ.	բյուջեով ծախսեր նախատեսված չեն	0	Համայնքի ղեկավար	
9		2 Հիմնական միջոցառումներ					
1		Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	Մշտապես	բյուջեով ծախսեր նախատեսված չեն	0	Համայնքի ղեկավար	

1		Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:	Անհրաժեշտու-թյան դեպքում	բյուջեով ծախսեր նախատեսված չեն	0	Համայնքի ղեկավար	
1		Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Անհրաժեշտու-թյան դեպքում	բյուջեով ծախսեր նախատեսված չեն	0	համայնքի տարահանման հանձնաժողովի նախագահ,	
1		Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:	Ըստ անհրաժեշ-տության	բյուջեով ծախսեր նախատեսված չեն	0	Համայնքի ղեկավար	
1		Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ) ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Անհրաժեշտու-թյան դեպքում	բյուջեով ծախսեր նախատեսված չեն	0	Համայնքի ղեկավար	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

Հավելված 2
Արևաշող համայնքի ղեկավարի
2020թ. Փետրվարի 5 – ի
թիվ 5-Ա որոշման

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Ի Կ

Արևաշող համայնքի հակահեղեղային կառույցների (Կառույցի) հաշվառման

Հ/հ	Կառույցի տեղադրությունը (բնակավայր, գետավազան, վտակ)	Կառույցի տիպը (հեղեղատար, հեղեղակար-գավորիչ, բառաժ)	Կառույցի				Կառույցի տեղան-քի սեյսմիկության աստիճանը (բալ)	Մոտակա բնակավայրերի և կառուցվածքների անվանումը, որոնք կարող են տուժել Կառույցի անբավարար աշխատանքի հետևանքով	Կառույցի տեխնիկա-կան վիճակը (բավարար, անբավարար)
			երկա-ռու-թյուն-ը (մ)	լայնու-թյունը (մ)	խորու-թյունը (մ)	կողեզ-երի թեքու-թյունը, (⁰)			
1	***2***	***3***	***4***	***5***	***6***	***7***	***8***	***9***	***10***
1.	Գյուղ մտնող ճանապարհի սկզբնական հատվածում գտնվող	Հեղեղատար	88	0.5	0.5		9 բալ	գյուղամիջան ավտոճանապարհ	բավարար
2.	Գյուղի միջին հատված	Հեղեղատար	52	0.5	0.5		9 բալ	գյուղամիջան ավտոճանապարհ	բավարար
3.	Գյուղի վերին հատված	Հեղեղատար	66	0.8	0.8		9 բալ	գյուղամիջան ավտոճանապարհ	բավարար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

Հավելված 3.
Արևաշող համայնքի ղեկավարի
2020թ. Փետրվարի 5 – ի
թիվ 5-Ա որոշման

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Արեվաշող համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մասին

1. Վտանգի (աղետի) անվանումը(ները) - սելավ - հեղեղում - սողանք - քարաթափում - և այլն	Սելավ Հեղեղ
2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը(երը)	«Օձիձոր» գետակի ափամերձ տարածքները գետի հունի ողջ երկարությամբ
3. Առաջացման հնարավոր պատճառները	Ձնհալներից, հորդառատ անձրևներից, առաջացող կեղտաջրերը
4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	«Օձիձոր» գետակի ափամերձ տարածքների տնամերձ հողամասերը և նրանց վրա կառուցված բնակելի տները և օժանդակ շինությունները: Վտանգավոր գոտում գտնվում են 180 բնակելի տուն և օժանդակ շինություն 815 մարդ բնակչությամբ:
5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկություններ իրականացնելու համար	Մաքրել «Օձիձոր» գետակի հունը և վերնորոգել ափապաշտպան կառույցները: Գյուղի կենտրոնական ավտոճանապարհի ողջ երկարությամբ (3կմ) երկու կողմերում գտնվող ջրահեռացման առուների կառուցումը բետոնով:
6. Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2020թ-ին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների	Չի նախատեսված

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

05 փետրվարի 2020թ. **Թիվ 06**

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 15.01.2020թ. թիվ 01/107.4/00300-2020 գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1 – ին մասի 12 կետով, 35 – րդ հոդվածի 1 – ին մասի 29 – րդ կետով, 41-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին» թիվ 46-Ն որոշման հավելված 1-ի 19-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների» պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշողի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:
3. Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Արևաշող համայնքի ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

Հավելված.
Արևաշող համայնքի ղեկավարի
05 փետրվարի 2020թ
թիվ 06 որոշման

Պ Լ Ա Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ՀՀ ը/կ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Կատարողներ	Մասնակիցներ	Նշումներ
1	2	3	4	5	6	7
Ի ԱՌՆ ՓԾ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ						
1. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ						
1.1	ՀՀ վարչապետի 2014թ. սեպտեմբերի 26-ի N 934-Ն որոշման համաձայն՝	հուլիս	Համայնքի ղեկավար	Համայնքի ՔՊ ղեկավար կազմ, տարահանման հանձնաժողով		
	Մասնակցություն Լոռու մարզի համայնքներում քաղաքացիական պաշտպանության, խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տարահանման պլանների, տարահանման մարմինների, գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովների և ՔՊ ոլորտը կարգավորող այլ փաստաթղթերի ուսումնասիրության, մշակման և ճշգրտման, ինչպես նաև պաշտպանական կառույցների պահպանման, նախատեսման և կառուցման ուղղություններով մեթոդական և գործնական օգնության ցուցաբերմանը					

ՀՀ ը/կ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Կատարողներ	Մասնակիցներ	Նշումներ
1	2	3	4	5	6	7
1.2	Մասնակցություն ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար ՀՀ Լոռու մարզի Արևաշող համայնքի տարածքում հաշվառված ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չառգրավվող ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների քանակի ճշգրտմանը	Տարվա ընթացքում	Համայնքի ղեկավար	Համայնքի աշխատակազմ		
II ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ						
2. Պլանների և ծրագրերի մշակում						
2.1	«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» Արևաշող համայնքի ղեկավարի որոշման նախագծի մշակում և համաձայնեցում Լոռու ՄՓՎ-ի հետ	մինչև 25.12	Համայնքի ղեկավար	Համայնքի աշխատակազմ		

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՎԱԴԱ ՍԱՀԱԿՅԱՆ

ստորագրություն, անուն, ազգանուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» Փետրվարի 2020 թվականի N 7 – Ա

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18 - րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 2020թ. Ապրիլի 5-ին կայանալիք հանրաքվեի անցկացման համար Լոռու մարզի Արևաշող համայնքի տարածքում տեղամասային կենտրոններ սահմանել՝
   1) Արևաշող համայնքի հասարակական կենտրոնի շենքը՝ (հասցե՝ 1 – ին փողոց 120 մուտքը շենքի կենտրոնական մասից):
   2) Արևաշող համայնքի հասարակական կենտրոնի շենքը՝ (հասցե՝ 1 – ին փողոց 120 մուտքը շենքի արևմտյան մասից):
2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Պ. ՊԱՊԻԿՅԱՆ**

2020թ. Փետրվարի 10

գ. Արևաշող